ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/40

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Փոթոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, դեղորայքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.02.2021թ.-ի թիվ 26/26/1787-2021 գրությամբ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 08.02.2021թ.-ի թիվ 67 գրության հիման վրա, 10.02.2021թ.-ին «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 10.02.2021թ.-ին:

10.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/40 համարի ծածկագիրը:

18.02.2021թ.-ին և 05.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.03.2021թ.-ին:

2. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 08.02.2021թ.-ի թիվ 67 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ Վանաձորի բժշկական կենտին ՓԲԸ-ում դեկտեմբերի՝ 29-ին հայտարարվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ Առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Էմ Դի Էյ Թրեյդ ՍՊԸ»-ին անգործության ժամկետի ավարտից հետո հունվարի 20-ին ծանուցել է՝ ներկայացնելով ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4-11 ծածկագրով 27 542 198 դրամ պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Կազմակերպությանը նաև տեղեկացվել է, որ կնքված պայմանագրի հետ մեկտեղ պետք է ներկայացնեն պայմանագրի և որակավորման ապահովումներ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

«Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն պահանջված ժամկետում հրաժարվել է կնքված պայմանագրի հետ ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումներ բանկային երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով, փոխարենը ներկայացնելով տուժանքի մասին համաձայնագրեր:

Հանձնաժողովի որոշմամբ «Էմ Դի Էյ Թրեյդ ՍՊԸ-ի» կողմից բանկային երաշխիքներ չներկայացնելու պատճառով 1,3,6,16,29,42,54,56,59,61 չափաբաժիններով ընտրված մասնակիցներ են ճանաչվել հաջորդ տեղ զբաղեցրածրած մուսնակիցները Արֆարմացիա ՓԲԸ-ն, Թեոֆարմա ՍՊԸ-ն, Նատալի Ֆարմ ՍՊԸ-ն, Արմենֆարմ ՍՊԸ-ն, Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ-ն:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 24.02.2021թ.-ի թիվ 105 գրությամբ հավելել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ում դեկտեմբերի 29-ին կայացել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Հունվարի 14-ին հանձնաժողովը ներկայացրել է ընտրված մասնակիցների ցանկը և անգործության ժամկետ է սահմանվել <Պայմանագիր կնքելու մասին> հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք արձանագրություն թիվ 4: Հունվարի 14-ին ժամը 14:42 myarpi@yandex.ru էլ.հասցեից պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հայերեն և ռուսերեն լեզուներով ուղարկվել է Լոռու մարզպետարան www.gnumner.am կայքում տեղադրելու համար: Անգործության ժամկետ է սահմանվել հունվարի 15-ից հունվարի 19-ը: Հունվարի 15-ին բոլոր մասնակից կազմակերպություններին, այդ թվում Էմ Դի Էյ Թրեյդ ՍՊԸ-ին էլ.փոստով ուղարկվել է թիվ 4 արձանագրությունը: Քանի որ Էմ Դի Էյ Թրեյդ ՍՊԸ-ն պայմանագրի հետ մեկտեղ պետք է ներկայացներ բանկային երաշխիքներ պայմանագրի և որակավորման ապահովման համար, մեր կողմից նախապես ուղարկվել է պայմանագրի նախագիծ հունվարի 18-ին, որպեսզի կազմակերպությունը լրացուցիչ ժամանակ ունենա

երաշխիքների նախապատրաստման համար: Անգործության ժամկետի ավարտից հետո՝ հունվարի 20-ին ևս տեղեկացվել է պայմանագրի նախագծի վերաբերյալ: Կազմակերպությունը հրաժարվել է ներկայացնել բանկային երաշխիք: Փետրվարի 1-ին Էմ Դի Էյ Թրեյդ ՍՊԸ-ի կողմից ստացել ենք էլեկտրոնային տարբերակը պայմանագրի, պայմանագրի ապահովումը տուժանքի մասին համաձայնագրի տեսքով, որակավորման ապահովումը տուժանքի մասին համաձայնագրի տեսքով: Մի քանի օր անց նույնը ստացել ենք կնիքված թղթային տարբերակով: Փետրվարի 1-ին Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից կրկին էլ.փոստով զգուշացվել է, որ պետք է ներկայցնեն բանկային երաշխիքներ: Նաև բազմիցս գնումների համակարգողի կողմից հեռախոսազանգի միջոցով տեղեկացվել է, որ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4-11 ծածկագրով պայմանագրի գումարը կազմում է 27 542 198 դրամ, հետևաբար բանկային երաշխիքների ներկայացումը պարտադիր է:

Հանձնաժողովի որոշմամբ <Էմ Դի Էյ Թրեյդ ՍՊԸ-ի> կողմից սահմանված ժամկետում բանկային երաշխիքներ չներկայացնելու պատճառով փետրվարի 8-ին հանձնաժողովի կողմից 1,3,6,16,29,42,54,56,59,61 չափաբաժիններով ընտրված մասնակիցներ են ճանաչվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցները՝ Արֆարմացիա ՓԲԸ-ն, Թեոֆարմա ՍՊԸ-ն, Նատալի Ֆարմ ՍՊԸ-ն, Արմենֆարմ ՍՊԸ-ն, Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ-ն: Նշված չափաբաժինների համար փետրվարի 8-ին անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով մրցույթը կազմակերպվել և ընթացել է ՀՀ Գնումների օրենքի համապատասխան: Էմ Դի Էյ Թրեյդ ՍՊԸ-ն տեղեկացված է եղել մրցույթի ամբողջ ընթացքի մասին՝ արձանագրությունների, գրությունների և հեռախոսազանգերի միջոցով, ուղակի հաղթող ճանաչվելով ցանկացել է բանկային երաշխիքների փոխարեն ներկայացնել տուժանքի մասին համաձայնագրեր: Խնդրում եմ Էմ Դի Էյ Թրեյդ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:»:

3. <u>«Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 10.02.2021թ.-ին գրությամբ դիմել է «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.02.2021թ.-ի թիվ

26/26/1787-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարած թիվ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և հայտարարվել է ընտրված մասնակից որոշ չափաբաժինների մասով:

15.01.2021թ-ին ստանում ենք պատվիրատի թիվ 4 արձանագրությունը, որով հրապարակվում է ընտրված մասնակիցների ցանկը և պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

18.01.2021թ-ին, մինչ անգործության ժամկետի հայտարարելը պատվիրատուից ստանում ենք պայմանագրի նախագիծը՝ (ուղարկում ենք Ձեզ նամակը):

01.02.2021թ-ին մեր կողմից կնքվում է պայմանգիրը և էլեկտրոնային եղանակով ուղարկվում է պատվիրատուին՝ նպատակով, որ անգործության ժամկետ հայտարարելուց և անգործության ժամկետը ավարտվելուց հետո պատվիրատուին կներկայացվեն պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները թղթային տարբերակով:

08.02.2021թ-ին պատվիրատուն պայմանագիր կնքելու մասին հայտարարությանը հրապարակում է տեղեկագրում և հայտարարում անգործություն 5 օրացուցային օր /կից ներկայացնում ենք/, այսինքն անգործության ժամկետ է հայտարարվում 2021թ-ի փետրվարի 9-ից մինչև փետրվարի 13-ը ներառյալ, որից հետո մասնակիցը ունի 10 աշխատանքային օր ներկայացնելու պայմանագրի և որակավորման ապահովումները և պայմանագիրը կնքելու համար:

Սակայն նույն օրը՝ անգործության ժամկետի հայտարարելու օրը պատվիրատուն գրություն է ուղարկում ՀՀ ֆինանսների նախարարություն «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար՝ պատճառաբանելով, որ անգործության ժամկետի ավարտից հետո հունվարի 20-ին ծանուցել է մեզ (իրականում հունվարի 20-ին որևէ գրություն պատվիրատուից չենք ստացել) ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծը և որ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն պահանջված ժամկետում

հրաժարվել է կնքված պայմանագրի հետ ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի հոդված 10-ի անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեղեկագրում հրապարակման օրվան /պատվիրատուն հայտարարությունը հրապարակել է 2021 թ-ի փետրվարի 8-ին/ հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Փաստացի անգործության ժամկետը սկսվել է 2021թ-ի փետրվարի 9-ից միայն, այնինչ պատվիրատուն գրությունը ֆինանսների նախարարություն ուղարկել է մինչև անգործության ժամկետը փետրվարի 8-ին:

Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Փաստացի, պատվիրատուն խախտել է նաև տեղեկագրում պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը հրապարակելու ժամկետները նույնպես:

Հոդված 10. Պայմանագիր կնքելու մասին որոշումը, անգործության ժամկետը, պայմանագրի կնքումը և պայմանները.

1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

6. Գնման հետ կապված կողմերի՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:

Փաստորեն «էմ Դի էյ Թրեյդ» ՍՊԸ-ն չի խախտել գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված որևէ ժամկետ:»:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը մերժել և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/40 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն:

iii. «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգի գնմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և

պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.01.2021թ.-ին կայացված նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է թիվ 1, 3, 6, 16, 22, 29, 42, 54, 56, 59 և 61-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հաստատել Պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը՝ անգործության ժամկետ է սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից միևչն 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

vi. Հանձնաժողովի 20.01.2021թ.-ին կայացված նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է թիվ 1, 3, 6, 16, 22, 29, 42, 54, 56, 59 և 61-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին:

vii. Հանձնաժողովի 08.02.2021թ.-ին կայացված նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով մրցույթի անգործության ժամկետի 15.01.2021թ.-ից 19.01.2021թ.-ի ավարտից հետո հունվարի 20-ին ծանուցել է որպես ընտրված մասնակցի «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով Ընթացակարգի պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Մասնակիցը նաև տեղեկացվել է, որ կնքված պայմանագրի հետ մեկտեղ պետք է ներկայացվեն պայմանագրի և որակավորման ապահովումներ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն հրաժարվել է ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումներ բանկային երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

ix. Հանձնաժողովի որոշմամբ «Էմ Դի Էյ Թրեյդ» կողմից բանկային երաշխիքներ չներկայացնելու պատճառով 1, 3, 6, 16, 22, 29, 42, 54, 56, 59 և 61-րդ չափաբաժիններով ընտրված մասնակիցներ են ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցները:

x. 08.02.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է

պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացույցային օր:

xi. Պատվիրատուն 18.01.2021թ.-ին գրությամբ Մասնակցին ներկայացրել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.02.2021թ.-ի թիվ 26/26/1787-2021 գրությամբ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Նույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է: Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության

ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը: Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 34-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով: Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:

Կարգի 32-րդ կետի 12-րդ նեթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 8.24-րդ կետի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

Նույն հրավերի 8.25-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում «5» օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր: Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնման ընթացակարգի քարտուղարը պարտավոր է մինչև պայմանագրի

կնքումը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում (www.gnumner.am կայքում) ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, ինչը պարունակում է ամփոփ տեղեկատվություն … անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում առնվազն 10 օրացուցային օր է, իսկ գնման այլ ընթացակարգերի համար՝ առնվազն հինգ օրացուցային օր է, ինչը հաշվարկվում է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից: Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել նաև, որ պատվիրատուն մինչև պայմանագիր կնքելը տեղեկագրում պետք է հրապարակի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն՝ անգործության ժամկետի վերաբերյալ: Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է: Պատվիրատուն անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը: Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.01.2021թ.-ին կայացված նիստի թիվ 4 արձանագրությամբ և ապա 20.01.2021թ.-ին

կայացված նիստի թիվ 5 արձանագրությամբ թիվ 1, 3, 6, 16, 22, 29, 42, 54, 56, 59 և 61-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

Հանձնաժողովը 14.01.2021թ.-ին կայացված նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է հաստատել Պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը՝ անգործության ժամկետ է սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից միևչն 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Պատվիրատուն 18.01.2021թ.-ին գրությամբ Մասնակցին ներկայացրել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը: Այն դեպքում, երբ Հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում հրապարակվել է 08.02.2021թ.-ին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և Հրավերի 8.24 ու 8.25-րդ կետերով սահմանված պահանջները, քանի որ օրենսդիրը հստակ սահմանել է, որ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, իսկ պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը՝ բացառելով այլնտրանքային մեկնաբանություն:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 18.01.2021թ.-ին՝ մինչև անգործության ժամկետի ավարտը՝ 15.02.2021թ.-ը, «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին ուղարկելով պայմանագրի նախագիծը, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և Հրավերի 8.24 ու 8.25-րդ կետերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների

խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Պատվիրատուն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր էր տեղեկագրում հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը

հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 1-ի մասի դրույթները: Պատվիրատուն չհրապարակելով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ չի պահպանել Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու իրավասության չի ծագել, ընդ որում, հատկանշական է նաև, որ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.02.2021թ.-ի թիվ 26/26/1787-2021 գրությամբ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/40 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**